

Միրելի Ուսուցիչ...

»Ոչ եւս է մաէսթրօ Սէպուի Աբգարեան« գուծեցին լրատուամիջոցները: ԳՈՀԱՐ-ի հանրաժանաչ մաէսթրօն ըլլալէդ առաջ, սակայն, եդար մեր՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան սան-սանուիիններուն սիրելի ուսուցիչը: Նախ դուն երկրորդական ուսումդ ստացար այդ աննման կրթարանէն ներս, ապա, բնածին տաղանդներդ զարգացնելէ ետք, մօտ 50 տարի սատարեցիր դաստիարակութեան կրտսեր Մելգոնեանցի քոյրերուդ ու եղբայրներուդ, ըլլալով անոնց գծագրութեան եւ երաժշտութեան ուսուցիչը, պարուսոյցը սքանչելի պարախումբին, իսկ Կիպրոսի երաժշտութեան հայր՝ Վահան Պէտէլեանի հանգստեան կոչուելէն վերջ – ինք էր ճիպտոր քեզի փոխանցողը հաստատութեան 1966-ի 40 ամեակի հանդիսութեան ընթացքին – խմբավարը այն քառածայն երգչախումբին, որ իր տարեկան համերգներով կը հիացնէր կողիին հայ եւ օտար ունկնդիրները: Կոչումիդ հաւատարիմ՝ հոգին եւ մղիչ ուժը դարձար Մելգոնեանի հարուստ մշակութային կեանքին, հանդէսներու եւ խարուկահանդէսներու գեղարունստական յայտագրի պատրաստութեամբ եւ երգով կամ նուագով մասնակցութեամբ, թատերական ներկայացումներու բեմայարդարումով, գրամեքենայով ստեղծած դիմանկարներովդ, աշակերտներուդ մասնակցութեամբ ստեղծած քանդակներովդ: Տակաւին աշակերտներէդ շատերուն առաջին »գործերը« պահեցիր եւ, տասնամեակներ վերջ, »փրկելով« վերադարձուցիր, զարմացնելով զիրենք: Սփիւռքի զանազան գաղութներ այցելութիւններուդ առիթով յուշերով, զուարճախօսութիւններով եւ երգերով հարստացուցիր տեղւոյն »սանուց«ներուն հաւաքոյթները: Որոշ առիթներով հիւրաբար ղեկավարեցիր անգամ Աթէնքի »Արարատ« Մ.Մ.Միութեան մեր երգչախումբը:

1954-ին Վահրամ Մավեանի եւ Անգինէ Քէշիշեան-Մուրատեանի հետ միասին հիմնեցիր Կիպրոսի Հայկական Ռատիոժամը, որ ճարտարութեամբ վարեցիր 46 տարի, նախ կիրակիները, ապա՝ ամէն օր հայ երգն ու գրականութիւնը մտցնելով Կիպրոսի եւ Միջին Արեւելքի հայկական օճախներէն ներս:

Յետոյ... ստեղծեցիր եւ ղեկավարեցիր անգուգական ԳՈՀԱՐ մը, հովանաւորութեամբ՝ Խաչատուրեան եղբայրներուն, որ հայ երաժշտութեան, երգի ու պարի գոհարները տարածեց աշխարհով մէկ եւ մաէսթրօ Սէպուի Աբգարեանը դարձուց հանրաժանօթ:

Մեծ եղաւ ցաւը, որ Մելգոնեանի փակումը պատճառեց քեզի, եւ ճիպտիդ առնթներ շարժեցիր գրիչդ ալ, քննադատելով եւ պախարակելով այդ տխուր որոշումը առնողները, յուսալով որ կրնայիր շարժել անոնց սրտերը:

Գրութիւններդ ոչ միայն թշնամութիւն յառաջացուցին ոմանց մօտ, այլ մեկնեցար առանց երագդ իրականացած տեսնելու:

Վարձքդ կատար, սիրելի ուսուցիչ:

Մելգոնեան մեծ բարերարները հպարտ պիտի ըլլային իրենց հիմնած դպրոցի արգասիքով, որ անկէ առածը բազմապատկելով բաշխեց Մելգոնեանցիներու յաջորդող սերունդներուն եւ համայն հայութեան:

Ոչ եւս ես... ֆիզիքապէս: Թողած աւանդովդ ու յիշատակներովդ միշտ մեզի հետ պիտի ըլլաս:

Միրելի Մելգոնեանդ հիւրընկալող ասպնջական Կիպրոսի հողը թնթնու գայ  
վրադ:  
Երանուհի Ղազարեան (1968)